ԱՆՆԱ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ. Ձայնեղանակների ուսումնքը Միջնադարյան Հայաստանում, *Երևան, «Գիտություն» հրատ., 2013, 336 էջ:*

Գիտությունների ազգային ակադեմիայի արվեստի ինստիտուտն ու «Գիտություն» հրատարակչությունը լույս են ընծայել արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Անանա Արևշատյանի «Ձայնեղանակների ուսումնքը միջնադարյան Հայաստանում» աշխատությունը: Հայ երաժշտական միջնադարագիտության ամենաբեղուն ներկայացուցիչներից մեկի՝ Ա. Արևշատյանի այս ուսումնասիրությունը, սխալված չենք լինի, եթե ասենք, թե հեղինակի վերջին տասնամյակի հետազոտությունների արդյունքն է, որի տարբեր մասեր ու բաղադրիչներ գիտական հանրությանն են ներկայացվել տարբեր տարիների և գիտական ամենատարբեր ձևաչափերով: Թերևս, հիշենք միայն նրա հրատարակած մեկ այլ մենագրություն, որ, կարելի է ասել, ներկա հատորի նախադուռը հանդիսացավ: Խոսքը 2003-ին հրատարակված «Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ» գրքի մասին է:

Ներկայացվող աշխատությունը նվիրված է հայ միջնադարյան երաժշտաբանաստեղծական արվեստի տեսական հիմքերից մեկի՝ «Ձայնի» կամ «Ձայնեղանակի» միջնադարյան ընկալումներին, մեկնություններին, այլ մշակույթներում ունեցած զուգահեռներին և հարակից այլ հարցերի լուսաբանմանը:

Հայտնի է, որ հայ միջնադարյան մասնագիտացված երաժշտաբանաստեղծական արվեստը, այլ խոսքով՝ հայ հոգևոր երգարվեստը, երաժշտական մտածողության առումով, հիմնականում, «ձայնային» արվեստ էր: Այսինքն, նրա համար հիմնարար նշանակություն ունեին որոշակի քանակությամբ կանոնացված երաժշտատեսական-մեղեդիական բանաձևեր՝ «Ձայներ» կամ «Ձայնեղանակներ»: Դրանց հիմքի վրա էին կառուցվում միջնադարյան մասնագիտացված երաժշտական արվեստի թե՛ ստեղծագործական, թե՛ կատարողական գրեթե բոլոր գործընթացները: Ձայնեղանակները մաս էին կազմում հայկական միջնադարի երաժշտական գրության համակարգի՝ խազարվեստի, տեսական-գեղագիտական և աստվածաբանական հայեցակարգերի: Ա. Արևշատյանի գրքում ձայնեղանակն ուսումնասիրվում է այս բոլոր երեսակներով՝ իր հեթանոսական գաղափարաբանական տարրերով, ապա վաղ քրիստոնեական և զարգացած միջնադարի ձևակերպումներով: Ընդգրկված հեղինակների ցանկը պատկառելի է՝ կապադովկյան հայրերից մինչ Ս. Գրիգոր Տաթևացի և իր աշակերտներ Թովմա Մեծոփեցի, Առաքել Սյունեցի: Հաջորդ երկու խոշոր հեղինակները, արդեն, ձայնեղանակային մտածողության ուսումնասիրողներ են՝ Նորոգության շրջանից Գրիգոր Գապասակալյանը և նոր շրջանից Կոմիտասը: Թեև հեղինակը Գապասակալյանին համարում է միջնադարյան ավանդույթն ամփոփող տեսաբան:

Աշխատության շրջանակները միայն քրիստոնեական ավանդույթով չեն սահմանափակվել: Նկատի ունենալով ձայնեղանակների և դրանց համարժեք երաժշտական հասկացությունների ընդհանրական լինելը ողջ միջնադարյան երաժշտական արվեստի համար՝ հեղինակը դիտարկումները տեղափոխել է համեմատական ուսումնասիրությունների դաշտ, ներառել Մերձավոր Արևելքի նաև իսլա-

մական մշակույթի համաբնույթ ավանդույթը:

Աշխատության բուն երաժշտագիտական կողմն առավել ընդգծվում է առանձին գլխով՝ Դկ դարձվածքին նվիրված հետազոտությամբ: Բանն այն է, որ դեռևս վաղ միջնադարյան աղբյուրներում, արդեն, առանձին ձայնեղանակներ հիշատակվել են որոշ հոգևոր երգերի կամ նույնիսկ երգերի խմբերի լծորդմամբ: Սակայն մեզ հասած հիմներգական ավանդույթն այդ լծորդումները չի հաստատում: Ուստի, որոշակի ձայնեղանակի և որոշակի հոգևոր երգի կամ հոգևոր երգերի փոխկապակցման հարցը հայ միջնադարյան մասնագիտացված երաժշտաբանաստեղծական արվեստի խնդրահարույց կնճռոներից է:

Ա. Արևշատյանին հաջողվել է լուսաբանել նման մի փոխկապակցված իրողություն Դկ դարձվածքի շրջանակներում: Երաժշտագետը ցույց է տալիս, որ հայ քրիստոնեական ավանդույթում նահատակներին նվիրված բազմաթիվ ստեղծագործություններ ստեղծված են հենց այս կամ առընթեր այլ ձայնեղանակով, ինչը, ակներևաբար, կապված է այդ ձայնեղանակի բնութագրերի, դրանց միջնադարյան ընկալումների հետ: Ա. Արևշատյանը նման օրինաչափություն է նկատում նաև վրացական հիմներգության մեջ, ինչը նրան մղում է երևույթի ակունքը բյուզանդական արվեստում փնտրելու:

Իհարկե, համաձայն ենք, որ այս մոտեցումը կարող է հաստատվել համեմատական հետազոտություններով: Սակայն հայ և վրացական հիմներգական զուգահեռները, որ արտառոց չեն այս երկու քրիստոնեական ավանդույթներում առկա բազմաթիվ այլ զուգահեռների շարքում, մենք կնախընտրեինք մեկնաբանել երկու եկեղեցիների ունեցած պատմական շփումներով, քան դրանց հիմներգական ժառանգության՝ երրորդ, ենթադրելի ընդհանուր ակունքի առկայությամբ: Այլևայլ փաստարկներ մի կողմ թողնելով՝ նկատենք, օրինակ, որ հիմներգության ձևավորման վաղքրիստոնեական փուլում, մինչ VII դարի սկիզբ, վրաց եկեղեցին հայ եկեղեցուն ենթակա աթոռներից մեկն էր՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Ինչևէ, հեղինակի կողմից նկատվածը կարևոր օրինաչափություն է, որ կարող է ուղենիշ դառնալ ձայնեղանակին առնչվող վերոհիշյալ կնճռոների լուծման ճանապարհին:

Ա. Արևշատյանի ներկա աշխատության գիտական արժեքն անհամեմատ մեծ է, քանի որ համակողմանի հետազոտություններին զուգահեռ ի մի է բերել իր քննած խնդրին առնչվող, հայ իրականության մեջ շրջանառված հին և միջնադարյան բոլոր հայտնի բնագրերը՝ իրենց աշխարհաբար փոխադրություններով: Դրանով իսկ գիրքը դառնում է ձայնեղանակներին վերաբերող կարևոր ուսումնասիրություն ու կարևոր աղբյուր՝ միաժամանակ:

Աշխատության արդյունքները օտարալեզու ընթերցողին հասու են ռուսերեն և ֆրանսերեն ծավալուն ամփոփումներով, ինչը խիստ կարևոր է հայագիտության ներկա փուլի արդյունքների միջազգայնացման առումով:

Կարող ենք միայն ողջունել վաստակաշատ գիտնականի այս գրքի հրապարակումը՝ այն դիտելով որպես հայ երաժշտական միջնադարագիտության արժեքավոր ձեռքբերում:

ՄՀԵՐ ՆԱՎՈՅԱՆ